

6.	ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ HISTORY ИСТОРИЧЕСКИЕ НАУКИ
-----------	--

ՀԽՍՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
1940-1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

1940–60-ական թվականներին հասարակական արտադրության նկատելի առաջընթացը և նրա արդյունավետության բարձրացումը էական ազդեցություն ունեցան խորհրդային ժողովուրդների կյանքի ու բարեկեցության վրա, թույլ տվեցին լուծելու սոցիալական որոշակի խնդիրներ: Կոմունիստական կուսակցությունը և խորհրդային կառավարությունն այդ ուղղությամբ իրականացրին մի շարք միջոցառումներ: Ուշագրավ են հատկապես աշխատաժամանակի կրճատման, լայն սպառման ապրանքների զանգավածային արտադրության և ապրանքաշրջանառության ծավալի մեծացման, ապրանքների գների իջեցման, աշխատավորների միջին աշխատավարձի բարձրացման, նրանց ռեալ եկամուտների ավելացման, կուլտուր-կենցաղային և այլ պայմանների բարելավման հետ կապված ձեռնարկումները:

Այդ ուղղությամբ որոշակի հաջողություններ ձեռք բերվեցին նաև խորհրդային Հայաստանում: Արդեն 1947 թ. ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում հիմնականում ավարտվեց խաղաղ պայմաններին համապատասխան արդյունաբերության վերակառուցումը: Այս, ինչպես նաև գյուղատնտեսության և տնտեսության մյուս ճյուղերի շոշափելի հաջողությունները պայմաններ ստեղծեցին 1947 թ. դեկտեմբերին կատարելու դրամական ռեֆորմ, որով վերացվեցին պատերազմի հետևանքները դրամական շրջանառության ասպարեզում, ամրապնդվեց ռուբլին: Միաժամանակ վերացվեց մթերքների բաշխման քարտային համակարգը, թեև դրանով խնդիրը չլուծվեց՝ ամենուր զգացվում էր դրանց կարիքը: Հետպատերազմյան տարիներին Հայաստանում տնտեսությունը, մասնավորապես արդյունաբերությունը, համակողմանի զարգացում ապրեց, որը բնակչության կենսամակարդակի բարելավման և նրա հետագա բարեկեցության բարձրացման համար ռեալ հնարավորություն ստեղծեց:

1945 թ. համեմատությամբ 1950 թ. ՀԽՍՀ արդյունաբերական արտադրանքը աճեց 156 տոկոսով: Հանրապետության արդյունաբերությունը աճի բարձր տեմպեր արձանագրեց հատկապես 1950–1960-ական թվականներին: Այսպես, 15 տարում (1950–1965 թթ.) Հայաստանում այն 249 տոկոսից բարձրացել է 1236

տոկոսի:¹

Հայկական ԽՍՀ պետական բյուջեի ընդհանուր ծավալում սկսեց մեծանալ սպառման նպատակին հատկացվող միջոցների տեսակարար կշիռը՝ 1965 թ. հասնելով 699,5 միլիոն ռուբլու, գերազանցելով 14 անգամ 1940 թ. (եղել է 49,9 միլիոն ռուբլի)² ցուցանիշը:

Այս ամենի շնորհիվ զգալիորեն աճեց բանվոր-ծառայողների, ամենից առաջ՝ արդյունաբերության մեջ զբաղված աշխատողների աշխատավարձը: Այսպես, եթե 1940–1965 թթ. ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության մեջ ընդգրկված աշխատողների աշխատավարձը բարձրացել է 2,7 անգամ, ապա արդյունաբերության մեջ՝ շուրջ 3 անգամ, միջին հաշվով արդյունաբերական ինժեներատեխնիկական անձնակազմինը՝ 1,9, արդյունաբերական բանվորներինը՝ 2,6, ծառայողներինը՝ 1,9 անգամ: Ինչպես տեսնում ենք, բանվորների աշխատավարձն ավելի արագ է բարձրացել, քան ինժեներատեխնիկական աշխատողներինը և ծառայողներինը: Դրա շնորհիվ եթե 1940 թ. արդյունաբերության մեջ զբաղված բանվորների աշխատավարձը կազմում էր արդյունաբերական ինժեներատեխնիկական անձնակազմի աշխատավարձի մոտ 50 տոկոսը, ապա 1965 թ.՝ 72 տոկոսը:³

ՀԽՍՀ բանվորների աշխատավարձի աճի տեմպերը հատկապես բարձր են եղել արդյունաբերության առաջատար մի շարք ճյուղերում: Օրինակ՝ 1950–1960 թթ. հանրապետության արդյունաբերության մեջ բանվոր-ծառայողների միջին ամսական աշխատավարձը բարձրացել է 1,1 անգամ, իսկ մեքենաշինության ու մետաղամշակման և շինանյութերի արդյունաբերության աշխատողներինը՝ համապատասխանաբար 1,4 և 1,8 անգամ:⁴ Ընդ որում՝ առավել բարձր տեմպերով բարձրացել է շինարարության բանվորների ամսական միջին աշխատավարձը, որը 1965 թ. հասել էր 116,5 ռուբլու, ինչը 17 ռուբլով գերազանցում էր արդյունաբերության բանվորների աշխատավարձը:⁵ Դա բացատրվում է այդ ճյուղում բանվորների աշխատանքի պայմաններով: 1965 թ. բանվորների միջին ամսական աշխատավարձը մեկ շնչի հաշվով հասավ 150 ռուբլու,⁶ որը սովորական ու միջին բանվորական ընտանիքին բավարարում էր հոգալու իր նվազագույն նյութական պահանջները, սա այն դեպքում, երբ, ըստ սոցիոլոգիական ուսումնասիրությունների, բանվորական յուրաքանչյուր ընտանիքին (միջինը 4 հոգուց բաղկացած) մեկ անդամի հաշվով, ամսական հարկավոր էր 50–55 ռուբ-

¹ Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, Статистический сборник, Ереван, 1967, с. 45.

² Народное хозяйство Армянской ССР в 1977 г., Статистический ежегодник, Ереван, 1978, с. 191.

³ Հաշվարկը կատարվել է ըստ Народное хозяйство Армянской ССР в 1983 г., Статистический ежегодник, Ереван, 1984, с. 180–181, Народное хозяйство Армянской ССР в 1970 г., Статистический ежегодник, Ереван, 1971, с. 129 տվյալների:

⁴ Труд в Армянской ССР, Ереван, 1970, с. 71–74, Народное хозяйство Армянской ССР в 1982 году, Статистический ежегодник, Ереван, 1983, с. 284.

⁵ Народное хозяйство Армянской ССР в 1970 г., с. 129.

⁶ Народное хозяйство Армянской ССР в 1977 г., с. 161.

լի: Եթե նկատի ունենանք, որ նույն ժամանակ նվազագույն աշխատավարձը 40–45 ռուբլի էր, ապա պատկերը լիովին կդառնա հասկանալի: Աշխատավարձի բարձրացման ցածր տեմպեր դիտվել են սպասարկման բնագավառում: Օրինակ՝ 1965թ. կապի, կոմունալ կենցաղային սպասարկման, հասարակական սննդի, առևտրի և նյութատեխնիկական մատակարարման բանվոր-ծառայողների միջին ամսական աշխատավարձը համապատասխանաբար կազմում էր արդյունաբերության մեջ զբաղված բանվոր-ծառայողների աշխատավարձի 72, 63 և 68 տոկոսը:⁷ Գյուղատնտեսության մեջ աշխատող բանվորի ամսական միջին վարձատրությունը բավականին ցածր էր արդյունաբերության մեջ աշխատող բանվորի միջին աշխատավարձից. 1965 թ. նրանց ամսական աշխատավարձերի միջև տարբերությունը կազմել է մոտ 40 ռուբլի:⁸ Կոլտնտեսականների դրամական եկամուտները նույն ժամանակ բանվոր-ծառայողներից պակաս էին 69 ռուբլով:⁹

Նկատելիորեն աճեցին բնակչության ռեալ եկամուտները: Դրանում էական նշանակություն ունեցան խորհրդային պետության նոր ձեռնարկումները գների իջեցման բնագավառում: Նշված տարիներին մի քանի անգամ կատարվեց լայն սպառման ապրանքների մանրածախ գների իջեցում, որի շնորհիվ 1940–1965 թթ. ՀԽՍՀ աշխատավորների միայն դրամական եկամուտը աճեց ավելի քան 93 տոկոսով:¹⁰

Բնակչության ռեալ եկամուտների աճին զգալիորեն նպաստեց նրանից գանձվող հարկերի կրճատումը: Եթե 1940 թ. բնակչությունից գանձվող հարկերը կազմում էին հանրապետության պետական բյուջեի եկամտային մասի (50,2 միլիոն ռուբլի), 8,9 տոկոսը (4 միլիոն ռուբլի), ապա 1965 թ.՝ (650,4 միլիոն ռուբլի) 4,3 տոկոսը (22,8 միլիոն ռուբլի):¹¹

Պետական փոխառության բաժնեգրության շարունակաբար կրճատումները զգալի չափով բարձրացրին ժողովրդի կենսամակարդակը: Հայտնի է, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ նշված ժամանակաշրջանում անց էր կացվում պետական փոխառության բաժնեգրում: Ստացված դրամական միջոցները՝ որպես լրացուցիչ աղբյուր, ներդրվում էին ժողովրդական տնտեսության մեջ: Սակայն արտադրության զարգացման և դրա նյութատեխնիկական հիմքի ամրապնդման շնորհիվ փոխառության բաժնեգրումն աստիճանաբար կորցրեց իր կարևորությունը, և 1965 թ. այն հասցվեց 0,4 տոկոսի, 1940 թ.՝ 6,2 տոկոսի դիմաց:¹²

Բանվոր-ծառայողների եկամուտների ընդհանուր հաշվեկշռի մեջ շարունա-

⁷ Հաշվարկը կատարվել է Народное хозяйство Армянской ССР в 1970 г., с. 129, Народное хозяйство Армянской ССР в 1983 г., с. 180–181 տվյալների հիման վրա:

⁸ Народное хозяйство Армянской ССР в 1970 г., с. 129.

⁹ Նույն տեղում:

¹⁰ Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 373.

¹¹ Народное хозяйство Армянской ССР в 1977 г., с. 271, Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 373.

¹² Народное хозяйство Армянской ССР в 1977 г., с. 271.

կում էր մեծանալ հասարակական ֆոնդերից ստացվող համալրումների բաժինը: Այդ ֆոնդերից հանրապետության բնակչությանը տրվող վճարումներն ու արտոնությունները 1965 թ. կազմեցին 342,0 միլիոն ռուբլի, իսկ յուրաքանչյուր բնակչի հաշվով՝ 155 ռուբլի:¹³

ՀԽՍՀ պետբյուջեից սոցիալ-մշակութային կարիքների համար հատկացումները սկսեցին ավելանալ: Այսպես, 1965 թ. հանրապետության պետբյուջեի ծախսային մասից, որը կազմում էր 667,0 միլիոն ռուբլի (1940 թ. եղել է 49,9 միլիոն ռուբլի), սոցիալ-մշակութային ոլորտի համար ներդրվել է 110,9 միլիոն ռուբլի,¹⁴ կամ ամբողջի 16,6 տոկոսը: Այսինքն՝ այս գումարը շուրջ 14 անգամ գերազանցում էր նույն նպատակի համար 1940 թ. հատկացմանը:

Բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում մեծ էր և թոշակների նշանակությունը:

1965 թ. ՀԽՍՀ-ում բոլոր կատեգորիայի թոշակառուների թիվը հասնում էր 164,2 հազարի:¹⁵ Հանրապետության սոցիալ-տնտեսական առաջընթացը ու դրա հետ կապված ազգային եկամտի աճը խորհրդային պետությանը հնարավորություն տվեցին մի շարք որոշումներ ընդունել բնակչության թոշակը բարձրացնելու ուղղությամբ: ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 1956 թ. հուլիսի 14-ին օրենք ընդունեց թոշակավորման ֆոնդն ավելացնելու մասին: Ծերության, պատերազմի և աշխատանքի հաշմանդամների համար սահմանվեցին թոշակի համապատասխան չափեր: Նոր օրենքը ծերության համար սահմանեց ամսական նվազագույն կենսաթոշակ՝ մինչև 30 ռուբլի: Դա առանձնակի նշանակություն ուներ հատկապես այն կենսաթոշակառուների համար, որոնք կենսաթոշակի էին անցել վաղուց, երբ դեռ բավականին ցածր էր աշխատողների աշխատավարձը: Պետական թոշակի մասին նոր օրենքը զգալիորեն բարելավեց նաև պատերազմի ու աշխատանքի հաշմանդամների նյութական դրությունն ու կենցաղային պայմանները: Նոր կարգի համաձայն՝ հաշմանդամների թոշակի չափը սահմանելիս հաշվի էին առնում աշխատանքի բնույթը, պայմանները և հաշմանդամության առաջացման պատճառը: Պետական թոշակների վճարման նոր օրենքին անցնելու շնորհիվ արդեն 1960-ական թվականների սկզբին երկրում ծերության թոշակի չափն աճեց ավելի քան 2, իսկ հաշմանդամներինը՝ 1,5 անգամ:¹⁶ Խորհրդային Հայաստանում այդ նպատակի համար նախատեսված գումարի չափը 1965 թ. կազմեց 50,4 միլիոն ռուբլի՝ 1940թ. 1,6 միլիոն ռուբլու դիմաց:¹⁷ Ավելացան բազմազավակ և միայնակ մայրերին տրվող հատկացումները: Եթե 1960 թ. այն կազմում էր 7,3 միլիոն ռուբլի, ապա 1965 թ.՝ 8 միլիոն ռուբլի:¹⁸

Ժողովրդի կենսամակարդակի բարելավման մասին են վկայում նաև բնակչու-

¹³ Народное хозяйство Армянской ССР в 1977 г., с. 271.

¹⁴ Նույն տեղում, էջ 270:

¹⁵ Народное хозяйство Армянской ССР в 1977 г., с. 270.

¹⁶ История СССР, т. 11, Москва, 1980, с. 526.

¹⁷ Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 373.

¹⁸ Народное хозяйство Армянской ССР в 1977 г., с. 270.

թյան դրամական եկամուտների շարունակաբար աճը, որի շնորհիվ ավելացան հանրապետության բանվոր-ծառայողների և կոլտնտեսականների ավանդները խնայողական դրամարկղերում՝ 1965 թ. կազմելով 174,6 միլիոն ռուբլի: Դա շոշափելի գումար էր, եթե հաշվի առնենք, որ 1940 թ. այն եղել է 3,1 միլիոն ռուբլի: ՀԽՍՀ մեկ բնակչի հաշվով ավանդների գումարը 1960 թ. 43 ռուբլուց 1965 թ. հասել է 80 ռուբլու: Այսինքն՝ 25 տարում բնակչության խնայողություններն աճել են 56,3 անգամ, իսկ ավանդի միջին չափը 39 ռուբլուց հասել է 424 ռուբլու¹⁹՝ աճելով շուրջ 11 անգամ:

Տարեցտարի աճում էր ժողովրդական սպառման ծավալը և ավելանում բնակչության ծախսերը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ նշված տարիներին պետական, կոոպերատիվ, մանրածախ, ներառյալ հասարակական սնունդը, ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը 1940 թ. 109 միլիոն ռուբլուց 1965 թ. հասել է 759 միլիոն ռուբլու, այսինքն՝ աճել է 7 անգամ:

Զգալիորեն մեծացավ ապրանքաշրջանառության ծավալը նաև մեկ շնչի հաշվով և 1940 թ. 84 ռուբլու դիմաց 1965 թ. կազմեց 344 ռուբլի:²⁰

1950-ական թվականներից սկսած աստիճանաբար բարելավվեցին բնակչության լավ սնվելու, հագնվելու և բարեկեցիկ կենցաղ ունենալու պայմանները: Այսպես, պետական ու կոոպերատիվ առևտրի համակարգերը, ներառյալ և հասարակական սնունդը, 1940 թ. համեմատությամբ 1960 թ. բնակչությանը միս և մսեղեն վաճառել են 10,7, ձուկ և ձկնեղեն՝ 1,8, կենդանական յուղ՝ 35,4, պանիր՝ 8, ալյուր և հացամթերք՝ 1,7, կաթնամթերք՝ 14,6 անգամ ավելի: 1965 թ. հանրապետությունում օգտագործվել է մեկ բնակչի հաշվով 27 կգ միս և ճարպ, 271 կգ՝ կաթ և կաթնամթերք, 26,2 կգ՝ շաքար, 160 կգ՝ հացամթերք, 57 կգ՝ կարտոֆիլ:²¹ Այս թվերը վկայում են, որ 60-ական թվականների կեսերին մսեղենն ու կաթնեղենը ՀԽՍՀ բնակչության սննդակարգում հիմնական սննդամթերքների շարքում էին դասվում:

Անշուշտ, այս ցուցանիշները դեռևս բավարար չէին, որպեսզի Հայաստանը բնակչության կենսամակարդակի առումով տեղ զբաղեցներ զարգացած երկրների ցանկում: Մեծապես աճել են բնակչության պահանջմունքները նաև ոչ պարենային արդյունաբերական ապրանքների նկատմամբ: Նշված տարիներին ՀԽՍՀ-ում բամբակե գործվածքների վաճառքն ավելացել է 2,5, մետաքսյա գործվածքներինը՝ 8,8, բրոյա գործվածքներինը՝ 5,5, տրիկոտաժեղենինը՝ 3,8, կահույքինը՝ 3,7 անգամ և այլն:²² Ապրանքաշրջանառության աճը մի կողմից բնակչության գնողունակության բարձրացման, իսկ մյուս կողմից՝ հասարակության առաջընթացի, հասարակական արտադրության զարգացման արտահայտությունն է: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում նկատելիորեն բարելավվեց առևտրի նյութատեխնիկական բազան, ընդարձակվեց խանութների ու ճաշարանների ցան-

¹⁹ Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 397.

²⁰ Народное хозяйство Армянской ССР в 1977 г., с. 192, Народное хозяйство Армянской ССР. Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР в 1977 г., Ереван, 1982, с. 220.

²¹ Народное хозяйство Армянской ССР в 1970 г., с. 130.

²² Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 289.

ցը, արմատավորվեցին սառնարանային սարքավորումների նոր տեսակներ: Չնայած մանրածախ ապրանքաշրջանառության մեծ ծավալներին, այնուհանդերձ, բնակչության անընդհատ աճող պահանջմունքներն արդյունաբերական ու պարենային շատ ապրանքների գծով չէին բավարարվում: Պահանջարկն առաջ էր անցել առաջարկից:

1950-ական թվականների վերջերից հանրապետության արդյունաբերության ծավալում սկսեցին նվազել պարենային ապրանքների արտադրության աճի տեմպերը: 1965 թ. պարենային ապրանքների արտադրությունը 1940 թ. համեմատ աճել է ընդամենը 2 տոկոսով՝ 54-ից հասնելով 56 տոկոսի: ՀԽՍՀ արդյունաբերական արտադրանքը որակական ցուցանիշներով էապես հետ էր մնում ինչպես միջազգային մակարդակից, այնպես էլ զիջում էր ԽՍՀՄ մի շարք հանրապետությունների առանց այն էլ ցածրորակ արտադրանքին:

Այդ ամենի պատճառով Հայաստանը ստիպված էր պարենային և արդյունաբերական այլ ապրանքներ ներկրել միութենական հանրապետություններից և արտերկրից:

Դեռ չէին հարթվել գյուղի և քաղաքի ապրանքաշրջանառության մակարդակների միջև եղած տարբերությունները: Օրինակ՝ 1965 թ. քաղաքային բնակավայրերում ապրանքաշրջանառությունը կազմել է 621 միլիոն ռուբլի, իսկ գյուղական բնակավայրերում՝ 138 միլիոն ռուբլի, այսինքն՝ 483 միլիոն ռուբլով պակաս:²³ Առևտրի ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալի մեջ 1940 թ. (փաստացի գներով) պետական առևտրին բաժին էր ընկնում 56, կոոպերատիվին՝ 43, իսկ կոլտնտեսային շուկային՝ 1 տոկոսը, 1965 թ.՝ համապատասխանաբար 68, 28 և 4 տոկոսը:²⁴ Սա նշանակում է, որ գյուղական բնակավայրերում բավականին ցածր էր բնակչության գնողունակությունը մեկ շնչի հաշվով և այն կազմում էր 142 ռուբլի, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 519 ռուբլի,²⁵ այսինքն՝ ավելի քան 3,6 անգամ պակաս:

Բնակչության կենցաղային պայմանների բարելավման համար կարևոր նշանակություն ունեցավ նշված ժամանակաշրջանում հանրապետությունում բնակարանային շինարարության ծավալումը: Այդ ուղղությամբ կատարված ներդրումներն արագորեն աճեցին հատկապես 1950-ական թվականների երկրորդ կեսից՝ կապված ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1957 թ. հուլիսի 31-ի «ԽՍՀՄ-ում բնակարանային շինարարությունը զարգացնելու մասին» որոշման հետ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 1946–1965 թթ պետական և կոոպերատիվ կազմակերպությունների (առանց կոլտնտեսությունների և բնակչության) կողմից բնակշինարարության մեջ ներդրվել է 674 միլիոն ռուբլի (համադրելի գներով): Նշված տարիներին Հայաստանի քաղաքներում և քաղաքատիպ ավաններում այդ գումարով կառուցվել և շահագործման է հանձնվել 5691 հազար քառ.մ՝ բնակտարածություն: Դրա հետ մեկտեղ՝ պետական վարկի օգնու-

²³ Народное хозяйство Армянской ССР в 1977 г., с. 192.

²⁴ Народное хозяйство Армянской ССР. Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР, с. 223.

²⁵ Նույն տեղում, էջ 220:

թյամբ և անձնական խնայողությունների հաշվին այդ տարիներին ՀԽՍՀ քաղաքներում և քաղաքատիպ ավաններում կառուցվեց ու շահագործման հանձնվեց ևս 3085 հազ. քառ. մ բնակելի տարածություն²⁶: Պետական բնակարանային ֆոնդի բնակելի մակերեսը միայն քաղաքներում և քաղաքատիպ ավաններում 1965 թ. կազմեց 11,2 միլիոն քառ. մ (մեկ շնչի հանշվով 8,9 մ²), 1940 թ. 2,3 միլիոն քառ. մ` (մեկ շնչի հաշվով 6,1 մ²) դիմաց²⁷: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ քննության առարկա ժամանակաշրջանում Հայաստանում բնակարանային շինարարությունը զարգացման ցուցանիշներով գերազանցում էր բնակչության աճի տեմպերին, որը կազմել է համապատասխանաբար 5 և 3,2 անգամ²⁸:

Գյուղերում ևս ծավալվեց բնակարանային լայն շինարարություն: Գետնափոր տներին և կավաշեն խրճիթներին սկսեցին փոխարինել քարաշեն, գեղեցիկ ու լուսավոր առանձնատները: Այդ տարիներին կոլտնտեսականների և գյուղական մտավորականության կողմից շահագործման հանձնվեց 4423 հազ. քառ. մ բնակտարածություն:

Այսպիսով, վերոգրյալ տարիներին հանրապետության քաղաքներում, քաղաքատիպ ավաններում և գյուղական բնակավայրերում շահագործման է հանձնվել 13199 հազ. քառ. մ ընդհանուր մակերեսով բնակելի տարածք: Չնայած տարեցտարի ավելանում էին բնակչինարարության ծավալները, սակայն ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում բնակարանային պրոբլեմը շարունակում էր մտահոգել:

Բնակարանային շինարարության ոլորտում խիստ բացասական երևույթներ էին պլանների սխտեմատիկ թերակատարումը, քաղաքաշինության և սեյսմակայունության նորմերի անտեսումը, անորակ շինարարությունը, բյուջետային միջոցների և շինանյութերի, մեղմ ասած, ոչ նպատակային և անարդյունավետ օգտագործումը, աշխատողների մասնագիտական որակի շարունակական անկումը և այլն: Ու այս ամենի հետևանքով ՀԽՍՀ-ում բնակարանային հերթում դեռ կանգնած էին տասնյակ հազար ընտանիքներ: Մի այդքան էլ հաշվվում էր բնակարանները բարելավելու կարիքավորների թիվը:

Նկատելիորեն բարձրացավ բնակչության բուժապասարկման մակարդակը: Ընդլայնվեց բուժօգնությունների ցանցը, հարստացավ դրանց նյութատեխնիկական բազան և ավելացավ բուժաշխատողների ու սպասարկող անձնակազմի թվաքանակը: Արդեն 1965 թ. Հայաստանում գործում էին 258 բուժօգնություններ (17775 մահճակալով), որոնցում աշխատում էին 5977 (առանց զինծառայողների) բժիշկ և 14772 բժշկական միջին անձնակազմ²⁹: Սա նշանակում է, որ 1940 թ. համեմատությամբ 1965 թ. բուժօգնությունների, բժիշկների և միջին բուժանձնա-

²⁶ Народное хозяйство Армянской ССР. Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР, с. 194–195.

²⁷ Народное хозяйство Армянской ССР в 1977 г., с. 161.

²⁸ Հաշվարկը կատարվել է Народное хозяйство Армянской ССР в 1965 г. Статистический ежегодник. Ереван, 1966, с. 7. Итоги всесоюзной переписи населения 1959 г. Армянского ССР, с. 11 տվյալների հիման վրա:

²⁹ Народное хозяйство Армянской ССР в 1977 г., с. 223. Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 363–365.

կազմի թվաքանակը համապատասխանաբար ավելացել է 2,8, 5,8 և 6,3 անգամ, իսկ մահճակալներինը՝ 4,3 անգամ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ եթե 1940 թ. Հայաստանում 10 հազ.բնակչին հասնում էր 7,5 բժիշկ և 17,1 միջին մասնագիտական բուժաշխատող, ապա 1965 թ.՝ համապատասխանաբար 26,7 և 66: ՀԽՍՀ-ում 1965 թ. 10 հազար բնակչին ընկնում էր 79,4 մահճակալ՝ 1940 թ. 30,1 դիմաց³⁰: Զգալիորեն աճեցին հատկացումներն առողջապահության կարիքների համար: ՀԽՍՀ-ում այդ նպատակի համար հատկացումները 1946 թ. դիմաց 1955 թ. ավելացան 74 տոկոսով: Հետագա տարիներին նույնպես այդ ուղղությամբ ներդրվող ֆինանսական միջոցները մշտապես ավելացել են: Արդեն 1965 թ. առողջապահության (ներառյալ նաև ֆիզիկական կուլտուրան) զարգացման համար հատկացվել է 52,5 միլիոն ռուբլի, այսինքն՝ 8,3 անգամ ավելի, քան 1940 թ. (կազմել է 6,3 միլիոն ռուբլի)³¹:

Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, նշված տարիներին ԽՍՀՄ մի շարք հանրապետությունների, առավել ևս զարգացած երկրների հետ համեմատած, Հայաստանում բուժապասարկումը զգալիորեն ցածր մակարդակի վրա էր գտնվում: ՀԽՍՀ-ն հիվանդանոցների, պոլիկլինիկաների և նման այլ ծառայությունների խիստ կարիք ուներ:

Առողջապահական հիմնարկները հազեցած չէին անհրաժեշտ արդիական բժշկական սարքավորումներով և բուժամիջոցներով, առանձին մասնագիտությունների գծով՝ նաև որակյալ կադրերով:

Համաշխարհային բժշկագիտության նորագույն նվաճումները չափազանց դանդաղ էին ներդրվում առողջապահության համակարգում: Եթե վերն ասվածին ավելացնենք և այն, որ այս համակարգում տիրում էր համատարած կաշառակերությունը, ապա պատկերը ամբողջական կդառնա:

Ընդլայնվեց առողջարանների և հանգստյան տների ցանցը. 1939 թ. 4 առողջարանի (890 մահճակալով) դիմաց 1965 թ. հանրապետությունում գործում էր 25 առողջարան (4245 մահճակալով) և 8-ի (1010 մահճակալով) փոխարեն՝ 6 հանգստյան տուն (823 մահճակալով): Մշտապես ավելացել է վերոգրյալ հիմնարկությունների ծառայություններից օգտվողների թիվը: Եթե 1950 թ. ՀԽՍՀ-ում այսպիսիների թվաքանակը եղել է 10899, ապա 1965 թ.՝ 40814, այսինքն՝ Հայաստանի բնակչության 10 հազար մարդուց 4,4-ը³²:

Ժողովրդի կենսամակարդակի բարձրացման և բուժապասարկման բարելավման հետ սերտորեն կապված՝ ՀԽՍՀ-ում պակասեցին հիվանդությունները, նվազեց բնակչության, հատկապես երեխաների մահացությունը և նկատելիորեն բարձրացավ ծնելիության գործակիցը: 1965 թ. տվյալներով Խորհրդային Հայաստանում ծնունդը 1000 բնակչի հաշվով կազմեց 29,1 մարդ³³: Դա սոցիալական բնագավառում հանրապետության մեծագույն ձեռքբերումներից էր:

Ընդլայնվեց նախադպրոցական հիմնարկների ցանցը: 1965 թ. ՀԽՍՀ-ում այդ

³⁰ Նույն տեղում:

³¹ Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 373.

³² Նույն տեղում, էջ 368:

³³ Народное хозяйство Армянской ССР в 1965 г., с. 11.

հիմնարկների թիվը հասավ 660-ի (քաղաքներում՝ 476, գյուղերում՝ 190), 61996 երեխաներով (քաղաքներում՝ 52111, գյուղերում՝ 9885), 1940 թ. 286-ի (քաղաքներում՝ 143, գյուղերում՝ 143) 14530 (քաղաքներում՝ 9697, գյուղերում՝ 4833) երեխաներով³⁴:

Այս ոլորտում նույնպես լուրջ դժվարություններ էին կուտակվել, որոնց առկայությունը հանգեցնում էր այդ հաստատությունների ոչ լիարժեք ու անարդյունավետ գործունեությանը: Մանկապարտեզաշինությունը շարունակում էր հետ մնալ բնակչության պահանջումներին՝ պետական միջոցներից սուղ հատկացումների պատճառով: Շատ ծնողների՝ նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում, չէր հաջողվում իրենց երեխաներին ուղարկել մանկապարտեզ՝ տեղերի սահմանափակության և վարձավճարի պատճառով:

Առանձնապես անհանգստացնող էր մանկապարտեզների կահավորման և անհրաժեշտ պիտույքներով ապահովելու հարցը: Նման վիճակում էին նաև մանկամուկները: Աշխատակազմի ցածր աշխատավարձը հանգեցնում էր աշխատանքի նկատմամբ նրանց շահագրգռվածության բացակայության:

Ժողովրդի կենսամակարդակի բարձրացման բնագավառում շոշափելի դեր կատարեցին կոմունալ-կենցաղային ծառայության հիմնարկների ընդլայնումը և զարգացումը: Դա ինքնին հասկանալի է: Շարունակաբար մեծանում էին բնակչության հագնվելու, կոմունալ-կենցաղային ծառայություններից մեծ չափով օգտվելու պահանջումներն ու հնարավորությունները: Էապես բարձրացավ բնակչության սպասարկման մակարդակը կոմունալ բաղնիքների գծով: ՀԽՍՀ-ում եթե 1940 թ. հաշվվում էր 12 կոմունալ բաղնիք՝ 1085 տեղ միաժամանակյա տարողությամբ, ապա 1965 թ. այդ թիվը հասավ 53-ի՝ 2905 տեղ միաժամանակյա տարողությամբ³⁵:

Դրական տեղաշարժեր կատարվեցին կենցաղսպասարկման ծառայություններից լվացքատների աշխատանքում: Արդեն 1965 թ. Հայաստանում գործում էր 12 լվացքատուն, որոնց թողունակության ընդհանուր կարողությունը մեկ հերթափոխում կազմում էր 9735 կգ չոր սպիտակեղեն, որը 1940 թ. համեմատությամբ ավելի էր 10 անգամ³⁶:

Բնակչության կենցաղում արմատավորվեցին ծառայությունների այնպիսի ձևեր, ինչպիսիք են վարսավիրանոցը, կոշիկի, հագուստի և կենցաղային զանազան ապրանքների պատրաստման ու նորոգման հիմնարկները:

Հասարակական սննդի և առևտրի օբյեկտների թիվը ավելացավ ավելի քան երկու անգամ: Այս ամենի շնորհիվ շոշափելիորեն կրճատվեց բնակչության տնտեսական կախվածությունը տնային և օժանդակ զանազան հոգսերից: Սակայն հարկ է նշել, որ հանրապետության բնակչության կոմունալ-կենցաղային ծառայության մակարդակի բարձրացումը հարաբերական էր: Գյուղական վայրերում, մասամբ նաև փոքր քաղաքներում քիչ էին կամ գրեթե բացակայում էին կենցաղսպասարկման հիմնարկները: 1965 թ. Հայաստանում գործում էր ընդամենը

³⁴ Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 369.

³⁵ Նույն տեղում, էջ 307:

³⁶ Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 307, Советская Армения за 40 лет. Статистический сборник, Ереван, 1960, с. 199.

այդպիսի 2554 հիմնարկություն (10557 աշխատողով), որից 613-ը (921 աշխատողով)՝ գյուղական բնակավայրերում³⁷: Դա նշանակում է, որ 1965 թ. ՀԽՍՀ-ում 1000 բնակչին հասնում էր 2,5 կենցաղսպասարկման ձեռնարկություն և 105 սպասարկող:

Բազմաթիվ շրջկենտրոններում, քաղաքատիպ ավաններում և գյուղերում կառուցվեցին ակունքներ, գրադարաններ, ընդարձակվեց ռադիոցանցը, դրվեցին մշտական կինոսարքավորումներ: Ընդլայնվեց հեռախոսային կապը քաղաքներում, շրջաններում և գյուղական վայրերում:

Բնակչության կենսամակարդակի բարձրացման մասին է վկայում նաև 1950-ական թվականների վերջերին կենցաղում գազի կիրառության փաստը: Մինչև Ղարադաղ-Աղստաֆա-Երևան գազամուղի շինարարության ավարտը և բնական գազի ստացումը, Երևանում 1958 թ. կեսերից կազմակերպվեց բնակչությանը բալոններով բերվող հեղուկ գազի մատակարարումը՝ խոհանոցային կարիքների համար: Նույն տարում Երևանի մի շարք բնակելի շենքերում տեղադրվեցին այդ գազի օգտագործման համար 586 սալօջախներ: 1959 թ. այդ աշխատանքները շարունակվեցին ավելի մեծ թափով և տեղադրվեց ևս 3136 սալօջախ³⁸: 1960 թ. ՀԽՍՀ-ում բնական գազը մուտք գործեց կենցաղ: Տարեվերջին հանրապետությունում բնական գազով գազաֆիկացվեց 12 հազ. բնակարան, իսկ 1965 թ. այդ թիվը աճեց 12,2 անգամ և հասավ 146537-ի: Ավելացավ բնակչությանը մատակարարվող գազի ծավալը. 1960 թ. 425 հազ. մ³-ի դիմաց, 1965 թ. այն կազմեց 25385 հազ. մ³ ³⁹:

Կենցաղում նկատելիորեն ավելացավ տնտեսական ու տնային գործածության առարկաների՝ ռադիոընդունիչների, հեռուստացույցների, լվացքի ու կարի մեքենաների թիվը: Օրինակ՝ եթե 1955 թ. ՀԽՍՀ բնակչության կողմից գնվել էր 22,4 հազ. ռադիոընդունիչ, ապա 1965 թ.՝ 28,5 հազ.: Նույն ժամանակամիջոցում սառնարանների՝ 1,9 հազարից հասավ 19,9 հազարի, իսկ լվացքի մեքենաներին՝ համապատասխանաբար 1,9 և 15,4 հազար: 1958 թ. դիմաց 1965 թ. Հայաստանում վաճառված հեռուստացույցների թիվն ավելացավ ավելի քան 3,4 անգամ և հասավ 26,3 հազարին⁴⁰: Նշված ապրանքների նկատմամբ բնակչության սպառողական պահանջների շարունակաբար մեծացման հետ կապված՝ կենցաղում լայն կիրառություն գտավ էլեկտրաէներգիան: 1960 թ. Հայաստանում այդ նպատակի համար օգտագործվել է 154 միլիոն 300 հազ. կվ/ժ էլեկտրաէներգիա՝ 1933 թ. 8 միլիոն 300 հազ. կվ/ժ դիմաց: Այդ կարիքների համար բացթողված էլեկտրաէներգիայի քանակը Երևան քաղաքում 1959 թ. կազմել է 75944 հազ. կվ/ժ՝ 1939թ. 18176 հազ. կվ/ժ դիմաց⁴¹:

³⁷ Народное хозяйство Армянской ССР в 1977 г., с. 213.

³⁸ ՀԱԱ, ֆ. 219, ց. 10, գ. 2, ք. 37, գ. 4, քք. 25–26:

³⁹ Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 305, Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի 22-րդ համագումարին, էջ 66:

⁴⁰ Советская Армения за 40 лет, с. 198, Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 288.

⁴¹ ՀԱԱ, ֆ. 219, ց. 10, գ. 2, ք. 39:

1965 թ. հանրապետությունում մեկ բնակչի հաշվով օգտագործվել է 1320 կվ/ժ էլեկտրաէներգիա, 1945 թ.՝ 370 կվ/ժ դիմաց, այսինքն՝ աճել է 3,6 անգամ⁴²:

Եական տեղաշարժեր կատարվեցին նաև ջրամատակարարման բնագավառում: Հանրապետության ջրնուղները միասին վերցրած 1965 թ. ցանցերին միջին հաշվով շուրջօրյա մատակարարել են 380 հազ. մ³ ջուր՝ 1940թ.՝ 43 հազ. մ³-ի դիմաց⁴³:

Նոր զարգացում ապրեց քաղաքային տրանսպորտը: Անցկացվեցին տրոլեյբուսի նոր գծեր և ստեղծվեցին ավտոբուսի ու տրամվայի նոր երթուղիներ: Արդեն 1965 թ. Հայաստանում տրամվայի և տրոլեյբուսի գծերի ընդհանուր երկարությունը հասնում էր 165 կմ-ի (1940 թ. եղել է 42 կմ), այդ թվում՝ Երևան քաղաքում⁴⁴՝ 150 կմ: Նույն թվականին ամբողջ հանրապետությունում նշված փոխադրամիջոցներով ուղևորվել է 102 միլիոն մարդ, որից Երևան քաղաքում՝ 98 միլիոն⁴⁵:

Զգալի աշխատանքներ կատարվեցին քաղաքների, բանվորական ավանների և գյուղական շրջկենտրոնների բարեկարգման ուղղությամբ: Բավական է նշել, որ 1955–1959 թթ. հանրապետությունում բարեկարգման աշխատանքների համար ներդրվել է 239 մլն 500 հազար ռուբլի, որից 161 միլիոն 300 հազար ռուբլին՝ Երևան քաղաքի համար⁴⁶: Ասենք նաև, որ միայն տեղական խորհուրդների տնօրինության տակ գտնվող բնակելի տների հիմնական վերանորոգումների և դրանց բարեկարգման համար 1960 թ. բյուջեով նախատեսված էր մոտ 25 միլիոն ռուբլի, որը այդ նույն նպատակի համար 1950 թ. առանձնացված միջոցները գերազանցում էր ավելի քան 4 անգամ⁴⁷:

Անշուշտ, տրանսպորտի աշխատանքների սիստեմատիկ բարելավումը և բնակավայրերի բարեկարգումը ևս նպաստավոր պայմաններ էին ստեղծում աշխատավորների պահանջմունքներն ավելի լավ բավարարելու, նրանց կյանքը ավելի բարեկեցիկ դարձնելու համար:

Նշված ժամանակաշրջանում արդյունաբերության մեջ և տնտեսության մյուս ճյուղերում աշխատանքների մեքենայացման, նոր տեխնիկայի ներդրման, հետևաբար և աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ կապված՝ կրճատվեց բանվորական ժամանակը և ավելացավ արտաաշխատաժամանակի տևողությունը, որը «մարդուն անհրաժեշտ է կրթության, հոգեկան զարգացման, սոցիալական ֆունկցիաներ կատարելու, ընկերական հաղորդակցության, ֆիզիկական ու հոգեկան կենսուժերի, ազատ խաղի համար...»⁴⁸:

⁴² Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 45.

⁴³ Նույն տեղում, էջ 307:

⁴⁴ 1933 թ. հունվարին Երևանում աշխատել սկսեց տրամվայը, որն այն ժամանակ ուներ ընդամենը 15 կմ երկարությամբ գիծ: 1949 թ. կեսերից սկիզբ դրվեց նաև տրոլեյբուսային երթուղիների: ՀԱԱ, ֆ. 219, ց. 10, գ. 2, թ. 12:

⁴⁵ Советская Армения за 40 лет, с. 20, Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 308.

⁴⁶ ՀԱԱ, ֆ. 219, ց. 10, գ. 3, թ. 22:

⁴⁷ Նույն տեղում, գ. 2, թ. 36:

⁴⁸ Կ. Մաքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1933, էջ 229:

1956 թ. ԽՍՀՄ-ում սկսվեց անցումը բանվորների ու ծառայողների վեցժամյա և յոթժամյա կրճատ աշխատանքային օրվա, որն ավարտվեց 1960թ.: 1967թ. ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը և ՀԱՄԿԽ-ն ընդունեցին հիմնարկ-ձեռնարկություններում ու կազմակերպություններում հնգօրյա աշխատանքային շաբաթ մտցնելու մասին որոշում: Հնգօրյա աշխատանքային շաբաթ մտցնելը բանվոր-ծառայողների գերակշռող մասի համար տարեկան ապահովել է մոտ 100 հանգստի օր (բացի հերթական արձակուրդից):

Այսպիսով, չնայած այդ հաջողություններին, այնուհանդերձ, քննվող ժամանակաշրջանում խորհրդային ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացման հետ կապված՝ դեռևս կային չլուծված շատ հարցեր ու պրոբլեմներ: Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը չէին ապահովում իրենց առջև դրված խնդիրների կատարումը, որի հետևանքով շարունակում էր ցածր մնալ պարենային ու արդյունաբերական ապրանքների սպառման ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով: Զգացվում էր բնակարանների խիստ պակաս, ցածր էր բնակչության բժշկական սպասարկման մակարդակը: Ոչ քաղաքային վայրերում, մասամբ նաև փոքր քաղաքներում քիչ էին կամ գրեթե բացակայում էին կենցաղապասարկման հիմնարկները: Արմատական կատարելագործման կարիք ունեին բնակչության կուլտուր-կենցաղային պահանջմունքները բավարարող հիմնարկների սպասարկման ձևերն ու մեթոդները: Թերություններ կային նաև ակումբների, գրադարանների և մշակույթի մյուս օջախների գործունեության մեջ: Ոչ քաղաքային վայրերում մշակույթի օջախների զգալի մասը գործում էր անհարմարավետ շենքերում, չունեին անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և որակյալ կադրեր:

СОЦИАЛЬНАЯ СТАБИЛЬНОСТЬ НАСЕЛЕНИЯ АССР В 1940-1960-ЫХ

Г. М. Арутюнян

Статья посвящена вопросу социальной стабильности населения АССР в 1940-1960 годы. Заметный прогресс общественного производства и повышение его продуктивности с 1940 по 1960-е годы значительно повлиял на жизнь и благосостояние советских людей, дал возможность решить некоторые социальные проблемы. В этом отношении некоторые достижения были и у Советской Армении. По сравнению с 1945 г. промышленное производство АССР выросло на 156 процентов. Высокие темпы развития промышленности Республики зафиксированы особенно с 1950 по 1960 г. Несмотря на эти приобретения, тем не менее, в изучаемый период времени, в связи с повышением материального благосостояния советского народа, все-таки не были решены многие вопросы и проблемы. Промышленность и сельское хозяйство не обеспечивали решение поставленных проблем, вследствие чего оставался на низком уровне объем потребления промышленного товара на душу населения.

THE ARMENIAN SOVIET SOCIALIST REPUBLIC POPULATION SOCIAL STATUS DURING 1940-1960

H. M. Harutyunyan

Visible progress of social production during 1940-1960 and the raise of its efficiency had an essential influence on soviet people life and welfare and helped to solve some social problems. Certain success in

that direction was noticed in the Soviet Armenia. In 1950 the industrial production raised by 15.6% in comparison with the year 1945. The republic's industrial production raised by 15.6%. High rates of industrial growth were recorded during 1950-1960. Thus, in the period under review, despite the mentioned success there were a number of unsolved problems connected with the material welfare growth of the soviet people. Industry and agriculture were not so effective which was the result of low level of agricultural and industrial products' per capita consumption.

ԼՈՐՈՒՏԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՐՈՒՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՅԵՍՏԱՆՈՑԸ ԵՎ ԲՐՈՒՏԻ ՀԱՍՏՈՑԸ

Վ. Վ. ԱՎԵՏՅԱՆ
ԳՊՀ պրոֆեսոր

Լռու մարզի Լորուտ գյուղի տարածքում, որը գտնվում է Դսեղ գյուղից 25 կմ հարավ-արևելք, 1970-ական թվականների վերջին քառորդում հայտնաբերել ենք /Վ. Ավետյան/ վաղ բրոնզից /մ.թ.ա. IV հազ./ մինչև զարգացած միջնադար ընկած ժամանակաշրջանի հարուստ, շարունակական զարգացմամբ մշակույթ: Այնտեղ կան առանձնատիպեր, որոնք առաջին անգամ են հայտնաբերվում Հայկական լեռնաշխարհում և ընդհանրապես Անդրկովկասում:

Նշված առանձնատիպերի շարքին են դասվում հնագույն բրուտագործական արհեստանոցը՝ կավամանների պատրաստման տեխնոլոգիական բոլոր գործընթացներով և բրուտի հաստոցը՝ դուրզը:

Լորուտի ձորում՝ Լորուտ գետի աջափնյա թեք, խորդուբորդ տարածքում, կաթնամշակման գործարան կառուցելու նպատակով շենքի հիմքեր փորելու ժամանակ, անգիտության պատճառով, բուլդուզերով քանդվել և ամբողջովին ավերվել էր բրոնզեդարյան մի նշանավոր հուշարձան, որն իր նշանակությամբ կարելի է համեմատել համընդհանուր ճանաչման արժանացած Շենգավիթի բրոնզեդարյան մշակույթի հետ:

Ուսումնասիրությունները սկսեցինք հուշարձանի այն հատվածից, որը համեմատաբար քիչ էր տուժել ավերածությունից և որը գտնվում էր քանդած և այնտեղ լցված հողի տակ:

1,5 մետր լիցքի հողը հեռացնելուց հետո, պեղահատվածի վերին կամ հյուսիսային կողմում, բացվեցին շինության պատաշարի մնացորդներ: Ըստ որում՝ այն բաղկացած էր երկու շերտից: Վերին շերտում բացվեց կանոնավոր շարվածքով անկյունապատ, իսկ դրա տակ՝ 0,5 մ խորության մեջ, հողի շերտ, որում կային վաղ բրոնզի դարին բնորոշ խեցեղենի բազմաթիվ բեկորներ, որոնց մի մասը պատված էր բաց շագանակագույն անգորբայով, սև և շագանակագույն փայլաներկով, իսկ մի մասն էլ ուներ վարդագույն աստառ:

Անշուշտ, նշված շինությունը եղել է բնակարան, որն, ինչպես պարզվեց, կառուցվել էր ավելի վաղ ժամանակների շինության ավերակների վրա:

Վերը նշված կառույցի քարե պատերի և հողակույտի շերտի տակից հաշված՝ 25 սմ խորության մեջ բացվեց 5-10 սմ հաստությամբ կավի շերտի մնացորդ,